



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՀՀ Քաղաքաշինության պետական կոմիտեի  
Ալ.Թամանյանի անվան ճարտարապետության  
ազգային թանգարան-ինստիտուտի տնօրեն՝

 Մ.Վ. Գրիգորյան  
28 նոյեմբերի 2022 թ.



ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

Լիլիթ Սամվելի Բաբայանի «Սյունիքի համայնքներում կլաստերային մոդելի կիրառման և ճարտարապետատարածական կազմակերպման առանձնահատկությունները» թեմայով ատենախոսության մասին՝ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ԺԸ.00.01՝ «Ճարտարապետություն և ճարտարապետական դիզայն» մասնագիտությամբ:

Հայաստանի Սյունիքի մարզի համայնքներում պահպանության և կլաստերային մոդելի ստեղծման ու ճարտարապետատարածական կազմակերպման հիմնախնդիրներին և առանձնահատկություններին նվիրված ատենախոսությունն այսօր անհրաժեշտություն է ներկայացնում թե՛ գիտական, թե՛ հուշարձանների պահպանության և պատշաճ ներկայացման, թե՛ զբոսաշրջության զարգացման տեսակետներից: Այսպիսի միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը մշտապես արդիական նշանակություն ունի, քանի որ ներառում է իր մեջ հնավայրերի ու հուշարձանների պահպանությանը, հետազոտությանը, նորովի օգտագործմանը և՛ փաստորեն, վերակենդանացմանն ուղղված գործընթացները:

Ինչպես նշում է ատենախոսության հեղինակը, ՀՀ Սյունիքի մարզի ներկա փուլի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական իրավիճակը, որը պայմանավորված է

չկանոնակարգված քաղաքաշինական միջամտություններով, առաջնահերթ պահանջ է առաջադրում մշակելու և իրականացնելու նոր պայմաններին համապատասխանող և մարզի իրական հնարավորությունները հաշվի առնող քաղաքաշինական գործունեություն: Հեղինակը տեսնում է ներկայացված խնդիրների լուծումը գոտիների նպատակային օգտագործմանն ու կայուն զարգացմանը, ինչպես և այլ անհրաժեշտ գործոններին ուղղված միջոցառումներում՝ տարածական պլանավորման հիմնական գործիքակազմի միջոցով:

Թեև Սյունիքը շատ հարուստ է ինչպես հուշարձաններով, այնպես էլ հանքահումքային պաշարներով, սակայն սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական տեսակետներից այն բավականին լուրջ հիմնախնդիրներ ունի:

Այդ հիմնախնդիրների հնարավոր լուծումներից մեկը հեղինակը տեսնում է ճարտարապետատարածական կլաստերային-ցանցային մոտեցման մեջ՝ դրա մոդելի տեղայնացումով ու ներդրումով: Այս մոդելն աշխատությունում դիտարկվում է որպես համայնքների համաչափ և արդյունավետ զարգացման հնարավոր տարբերակ՝ բոլոր նախապայմաններով ու հիմնախնդիրներով հանդերձ:

Հեղինակը մանրամասն անդրադառնում է «կլաստեր» եզրույթին, դրա սկզբնական նշանակությանը և ժամանակակից փոխակերպումներին ու օգտագործմանը արդիական պայմաններում: Ինչպես գրում է Լ. Բաբայանը, տարածական պլանավորման մեջ կլաստերային-ցանցային մոտեցումը այժմ «կառավարման նոր տեխնոլոգիա է, քանի որ իր մեջ ներառում է համայնքների հեռանկարային զարգացման երեք հիմնական թիրախները՝ կայունություն, համագործություն (համաչափություն) և հավասարակշռություն»:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ Սյունիքի մարզի համար առաջին անգամ մշակվել է ճարտարապետահատակագծային ձևավորված կառուցվածքի գնահատման մեթոդաբանություն և լայն կիրառություն ունեցող կլաստերային համակարգերի ստեղծում, օգտագործելով միջազգային փորձը: Այդ մեթոդաբանության հիման վրա կատարվել են համայնքների համալիր ուսումնասիրություն և գնահատում, ինչպես նաև մշակվել է համապատասխան քարտեզագրական և աղյուսակային տվյալների շտեմարան: Նորույթ է հանդիսանում նաև հեռանկարային հատակագծային զարգացման մոդելի մշակումը՝ համայնքների քաղաքաշինական նախագծման տարբեր փուլերում՝ կլաստերային տարածական

պլանավորման հիմքի վրա: Իրականացման համար ատենախոսությունում առաջադրված են արդյունավետ ու կայուն մեխանիզմներ:

Թեմայի ուսումնասիրվածության մակարդակը՝ ուսումնասիրության մեթոդներով հանդերձ, միանգամայն բավարար է, քանի որ դիտարկված և մանրամասնորեն ուսումնասիրված են կլաստերային մոտեցման դրույթային կետերը՝ համաշխարհային տարածական պլանավորման հայեցակարգային վերլուծությունների և գիտահետազոտական գործունեության մեջ՝ սկսած 20-րդ դարի սկզբում գոյություն ունեցող տեսություններից՝ ինչպես, օրինակ, անգլիացի փիլիսոփա Էբենեզեր Հովարդի առաջ քաշած «Ապագայի քաղաք-այգիներ» գրքում շարադրած դրույթները, այնպես և տարածական պլանավորման հայեցակարգերի, համաչափ և համակարգային կայուն քաղաքաշինական զարգացման հիմնախնդիրների վերաբերյալ գործնական և գիտական գործունեություն ծավալած այլ անձանց՝ Վ. Կրիստալլերի, Մ. Ռագոնի, Թ. Մորի, Լ. Կորբյուզեի, Տ. Կամպանելլայի և այլոց հետազոտողների աշխատանքները, մինչև ՀՀ համայնքների տարածական պլանավորման, քաղաքաշինական համակարգի կայուն, փոխկապակցված զարգացման հիմնախնդիրներին անդրադարձած հայ գիտնականների և ճարտարապետների՝ Յու. Սաֆարյանի, Ս. Թովմասյանի, Ա. Ալոյանի, Ն. Պետրոսյանի, Ա. Առուստամյան և այլոց աշխատանքները:

Հետազոտության արդյունքները հավաստի են, քանի որ հիմնված են գրական, արխիվային և վիճակագրական նյութերի ուսումնասիրության, պաշտոնական փաստաթղթերի և նորմատիվ իրավական ակտերի համեմատական վերլուծության, նմանօրինակների (անալոզների) մեթոդի կիրառության, ինչպես և կլաստերային վերլուծության, վերլուծության արդյունքների համադրմամբ իրավիճակի համալիր գնահատման և գիտականորեն հիմնավորված մոդելների մշակման հավաստի մեթոդների վրա:

Հետազոտության կիրառական նշանակությունը կայանում է ճարտարապետատարածական պլանավորման յուրաքանչյուր հիերարխիկ մակարդակի համար համայնքների կառուցվածքային կայուն զարգացման նկատմամբ միասնական համակցված սկզբունքների սահմանման, համայնքների միջև՝ կառուցվածքային և հատակագծային վերակազմավորումների, պատմամշակութային ժառանգության պահպանության գործընթացների

իրականացման և տարածքների արդյունավետ կառավարումն ապահովելու համար համագործակցության խթանման, ինչպես և մարզերի զարգացումն ու տեղական ինքնակառավարման մարմինների համար մրցունակ կլաստերների ցանցի ստեղծման միջոցով միջտարածաշրջանային կապերի ամրացման գործընթացներում, որոնք ներկայացված են տվյալ աշխատության մեջ:

Հետազոտության արդյունքները ներդրվել են անհրաժեշտ քանակով ծրագրերում և գործընթացներում, ինչպիսիք են.

ՀՀ Սյունիքի մարզի համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման գործընթացում մոդելի տեղայնացում և գործարկում զարգացման հայեցակարգային ծրագրերում:

ՀՀ Տավուշի, Սյունիքի, Արարատի, Վայոց Ձորի, Արմավիրի, Շիրակի, Գեղարքունիքի, Արագածոտնի մարզերի համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման գործընթացում մոդելի տեղայնացում և գործարկում զարգացման հայեցակարգային ծրագրերում:

ՀՀ համայնքների պատմական միջուկների կլաստերային վերականգնման և վերաօգտագործման հայեցակարգային նախագծերի առաջարկներում:

Բերդ քաղաքի հանրային կլաստերի տարածական հատակագծային կառուցվածքի ձևավորման հայեցակարգի մշակման նախագծում:

Գյումրի քաղաքի կենտրոնական միջուկի կլաստերային վերաօգտագործման և ճարտարապետահատակագծային կազմակերպման հայեցակարգային նախագծում:

Ուսումնակրթական ծրագրերի, դասընթացների իրականացման գործընթացների շրջանակում:

Կարծում ենք, որ թվարկվածը միանգամայն բավարար է հետազոտության արդյունքները փորձարկված համարելու համար:


**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**


Ներկայացված ատենախոսությունը ներառում է 143 էջ տեքստային և գրաֆիկական մաս՝ մեկ հատորով ներկայացված: Այն կազմված է ներածական մասից,

երեք գլուխներից, եզրակացություններից, 115 անուն օգտագործված գրականության ցանկից, ինչպես նաև 18 էջ հավելվածներից: Հարկ է նշել, որ ատենախոսությունը ավարտուն և լուրջ հետազոտություն է, որը նորույթ է հայ ճարտարապետական գիտության մեջ՝ հավաստի արդյունքներով հագեցած և դրական գնահատանքի արժանի: Ատենախոսության շարադրանքը նույնպես կատարված է պատշաճ մակարդակով: Հրատարակված հոդվածներն ու սեղմագիրն ամբողջությամբ արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Կարծում ենք, որ ուսումնասիրության թե՛ գիտական, թե՛ կիրառական նշանակությունը թույլ են տալիս եզրակացնել, որ Լիլիթ Սամվելի Բաբայանի «Սյունիքի համայնքներում կլաստերային մոդելի կիրառման և ճարտարապետատարածական կազմակերպման առանձնահատկությունները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, կարող է դիտարկվել որպես ներդրում հայ ճարտարապետության տեսության և պատմության բնագավառում, իսկ նրա հեղինակն արժանի է ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճանի՝ ԺԸ.00.01 «Ճարտարապետություն և ճարտարապետական դիզայն» մասնագիտությամբ:

Քննարկմանը ներկա էին Ալ. Թամանյանի անվան ազգային թանգարան-ինստիտուտի գիտական խորհրդի անդամներ՝ թանգարանի տնօրեն Մ. Գրիգորյանը, ճարտ. դոկտոր Ա. Գրիգորյանը, ճարտ. թեկն. Ա. Տեր-Մինասյանը, ճարտ. թեկն. Ն. Մարտիրոսյանը, Ա. Մինասյանը և Լ. Մարգարյանը:

ՀՀ Քաղաքաշինության պետական կոմիտեի Ալ. Թամանյանի անվան ազգային թանգարան-ինստիտուտի տնօրենի խորհրդական, ճարտարապետության թեկնածու  Ա. Տեր-Մինասյան

Ա. Տեր-Մինասյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ:  
Ալ. Թամանյանի անվան ազգային թանգարան-ինստիտուտի կադրերի բաժնի վարիչ  Ժ. Մելքոնյան